

Փաստ. անվանումը	Հետազոտական արդյունքների հրատարակման, հետազոտության վերհանված տվյալների վավերացման և հրապարակայնացման կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ՇՄ-16-01
Հաստատման ամսաթիվը	12/12/2014
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Միջազգային կապերի և հետազոտությունների բաժին
Ներդրման/իրականացման պատասխանատու	Միջազգային կապերի և հետազոտությունների պատասխանատու



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՄԲ ՎԵՐՀԱՆՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆԱՑՄԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

- Կանոնակարգի նպատակն է կարգավորել ԵՄՀ հետազոտական արդյունքների հրատարակման և հետազոտությամբ վերհանված տվյալների հրապարակման գործընթացները՝ պահպանելով հրատարակումներին ներկայացվող պահանջները, հեղինակային իրավունքը, տվյալների հրապարակման ընդունելի ձևաչափերն ու ընթացակարգը:
- Սույն կանոնակարգը նպաստում է ԵՄՀ հետազոտական արդյունքների փոխձանաչմանը, դրանց իրականացման հաշվետվողականությանը, ինչպես նաև ԵՄՀ և վերջինիս ներկայացուցիչների հեղինակային իրավունքի պահպանմանը:
- ԵՄՀ հրատարակումները ստեղծվում են բացառապես ԵՄՀ մարդկային և նյութական ռեսուրսների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով: ԵՄՀ աշխատակիցների ոչ կազմակերպական հետազոտական որակյալ աշխատանքը խրախուսելի է ԵՄՀ կողմից, սակայն հանդիսանում է ԵՄՀ աշխատակցի անձնական սեփականությունը և չի կարող վերագրվել ԵՄՀ-ին:
- ԵՄՀ բոլոր հրատարակումների տեսակները հրատարակվում են հետազոտող/ների կողմից ներկայացված դիմում-հայտի հիման վրա:

ԵՄՀ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ

- ԵՄՀ հետազոտական հիմնական արդյունքներն ուղղված են հաստատության կրթության որակի շարունակական բարելավմանը և մրցունակության բարձրացմանը:
- ԵՄՀ հետազոտական արդյունքները ներկայանում են մտավոր սեփականության ընդունելի ձևերով¹:
- ԵՄՀ հրատարակումների հիմնական տեսակները (չեն սահմանափակվում այսքանով) հետևյալն են՝ գիտական, կազմակերպական, գիտական-կազմակերպական, մեթոդաբանական/մեթոդական, գիտահանրամատչելի, գրական:
- ԵՄՀ գիտական հրատարակումների հիմնական տեսակները (չեն սահմանափակվում այսքանով) հետևյալն են՝ մենագրություններ, հոդվածներ, վերլուծություններ, զեկույցներ, էսսեներ:
- ԵՄՀ կազմակերպական հրատարակումների հիմնական տեսակները (չեն սահմանափակվում այսքանով) հետևյալն են՝ որակի ապահովման նյութեր, բուն ենթակառուցվածքային նյութեր (ԵՄՀ առանձին ստորաբաժանման գործունեությանը վերաբերող նյութեր), առանձին նախաձեռնությանը վերաբերող նյութեր (ԵՄՀ գիտաժողովների, աշխատաժողովների, բաց դռների օրերի և այլ առանձին միջոցառումների նյութեր), ընդունելության խթանման և այլ մարքեթինգային նյութեր:
- ԵՄՀ կազմակերպական, գիտական-կազմակերպական և մեթոդական/մեթոդաբանական նյութերը (մասնակիորեն՝ եթե վերաբերում են կազմակերպության գործունեությանը) միտված են ԵՄՀ հետազոտական գործունեության հիման վրա ԵՄՀ զարգացմանը: Դրանք ստեղծվում են ԵՄՀ ներկազմակերպական գնահատող հետազոտությունների արդյունքների հիման վրա:
- ԵՄՀ գիտական-կազմակերպական հրատարակման հիմնական տեսակ են ԵՄՀ յունիթները, որոնք ենթադրում են հրատարակման հատուկ կարգ²:
- ԵՄՀ մեթոդաբանական/մեթոդական հրատարակումները վերաբերում են տեսական և կիրառական մեթոդաբանությունների և մեթոդների մշակման, վերամշակման, առաջարկման հիմնախնդիրներին: Դրանք վերաբերվում են գիտական ոլորտների, ներկայացնում են ԵՄՀ

կազմակերպական նյութերի ստեղծման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման մեթոդներ, ԵՄՀ կազմակերպական գործընթացների կառավարման, գնահատման, վերահսկման և այլն մեթոդաբանությունների, դասավանդման մեթոդների:

- ԵՄՀ գիտահանրամատչելի և գրական նյութերը ստեղծվում են սատեղծագործաբար՝ առանց սահմանափակելու այդ նյութերի ստեղծման հեղինակային ազատությունը:

ԵՄՀ հետազոտական արդյունքի հրատարակման դիմում-հայտ

Դիմում հայտը ներակայացնող հետազոտ/ների անուն/ազգանուններ/պաշտոններ/հեռախոսահամարներ/էլ.հասցեներ Ամսաթիվ

Ներկայացվող հրատարակման նյութի անվանումը

Ներկայացվող հրատարակման նյութի հիմնական տեսակը՝ նշեք

Գիտական	Կազմակերպական	Այլ
<input type="checkbox"/> մենագրություն <input type="checkbox"/> հոդված <input type="checkbox"/> վերլուծություն <input type="checkbox"/> զեկույց <input type="checkbox"/> էսսե <input type="checkbox"/> այլ	<input type="checkbox"/> որակի ապահովման նյութ, <input type="checkbox"/> բուն ենթակառուցվածքային նյութ (ԵՄՀ առանձին ստորաբաժանման գործունեությանը վերաբերող նյութ), <input type="checkbox"/> առանձին նախաձեռնությանը վերաբերող նյութ (ԵՄՀ գիտաժողովների, աշխատաժողովների, բաց դռների օրերի և այլ առանձին միջոցառումների նյութեր), <input type="checkbox"/> ընդունելության խթանման և այլ մարքեթինգային նյութ <input type="checkbox"/> այլ	<input type="checkbox"/> յունիթ (յունիթը պարտադիր կերպով պետք է ստեղծված լինի ըստ ԵՄՀ յունիթների հրատարակման կարգի) <input type="checkbox"/> մեթոդական/մեթոդաբանական նյութ <input type="checkbox"/> գիտահանրամատչելի նյութ <input type="checkbox"/> գրական նյութ
Նյութի հրատարակման նպատակը		

Նյութը փոխանցում եք ԵՄՀ հետազոտության և զարգացման կենտրոնին՝

Էլ. փոստով

Տեքստային տարբերակով՝ առձեռն

Նյութի տպագրման համար անհրաժեշտ բյուջեն

Բյուջեյի հիմնավորում.

Նյութի տպագրման ցանկալի քանակը

Ո՞ւմ է նյութն ուղղված՝

Ներքին շահակիցների՝ ուսանողներ , ակադեմիական աշխատակազմ , այլ

Արտաքին շահակիցներ՝ շրջանավարտներ , գործատուներ , այլ

Տպագրությունը՝

գունավեր է , անգույն է

Նյութի հետ միասին ներկայացվո՞ւմ են գրախոսականներ՝ այո , ոչ

Նյութի հետ միասին ներկայացվո՞ւմ են վերջինիս հրատարակմանը նպաստող նյութեր՝ նյութի հիմքում ընկած հետազոտության ծրագիրը , մեթոդաբանությունը , գործիքակազմ , այլ նյութեր՝ նշել :

Այլ նշումներ

Նյութը հանձնողի անուն/ազգանուն

ստորագրություն _____

Նյութը ստացողի անուն/ազգանուն

ստորագրություն _____ Կ.Տ

ԵՄՇ հրատարակման ընթացակարգ

ԵՄՇ հրատարակվելիք նյութերի ստեղծման համար

- լրացվում է դիմում-հայտ, որին կցվում է հրատարակման ենթակա նյութը,
- նյութը ուղարկվում է համապատասխան փորձագետի, կամ փորձագիտական խմբի՝ եզրակացության համար
- տրվում է փորձագիտական եզրակացություն.
- փորձագիտական բացասական որոշման պարագայում նյութը չի կարող հրատարակվել, այն կարող է կրկին ներկայացվել հրատարակման ըստ սույն ընթացակարգի՝ ըստ փորձագիտական եզրակացության վերանայման ենթարկվելուց հետո,
- փորձագիտական դրական եզրակացության հիման վրա ԵՄՇ գիտական խորհուրդը կայացնում է նյութի հրատարակման մասին որոշումը,
- հրատարակվելիք նյութը վերամշակվում է տվյալ հարապարկման տեխնիկական պահանջներին համապատասխան:

Փորձագիտական եզրակացության ձևաթուղթ (հրատարակման ներկայացված ԵՄՇ հետազոտական արդյունքի վերաբերյալ)

Ձևաթղթի լրացման ամիս/ամսաթիվ

Նյութի անվանումը

Գրախոսող փորձագետ/ների անուն/ազգանուն/ներ, գիտական աստիճան/ներ, կոչում/ներ, պաշտոն/ներ

Նյութը համապատասխանում է նման նյութերին առաջադրվող ազգային և միջազգային գիտական և կրթական հանրության շրջանակներում ընդունելի պահանջներին.

Չափանիշ	Այո	Ոչ	Այլ պատասխան	Համապատասխան որակական նկատառումներ
Ունի անհրաժեշտ բովանդակություն, կառուցվածք: Նյութի բովանդակությունը համապատասխանում է վերջինիս անվանը:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Նյութի բովանդակությունը համապատասխանում է վերջինիս ստեղծման նպատակին:				
Հղումներն իրականացված են գրագիտորեն:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Առկա է պատշաճ գրականության ցանկ, հեղինակներն անդրադարձել են նյութի շուրջ առկա վերջին հետազոտություններին:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Ունի բովանդակային բուն նյութին վերաբերող իմաստային ամբողջականություն:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Ունի տեսական, կամ գործնական նպատակներով կիրառվելու ներուժ, պարունակում է տեղեկատվություն, որի հրատարակումը բխում է ԵՄՇ և այլ գիտական և կրթական համայնքների կարիքներից:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Նյութում իրականացված վերլուծական աշխատանքի համար նախապես մշակվել է հետազոտական ծրագիր	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Հիմնավորված է հիմնախնդիրը, որին նյութն ուղղված է	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Հիմնավորվում են վերլուծական աշխատանքի իրականացման մեթոդները, որոնք հիմնվում են հետազոտության իրականացման մեթոդների, գործիքակազմի, գործիքների տեղայնացման և կիրառման արդյունքների վրա:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Մահմանված են նյութում իրականացված վերլուծական աշխատանքի նպատակները և խնդիրները, որոնք բխում են դրա հիմքում ընկած հետազոտության նպատակներից և խնդիրներից:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		

Վերլուծական աշխատանքն ուղղված է հետազոտական վարկած/ների հաստատմանը, կամ հերքմանը:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Վերլուծական աշխատանքն ունի ստանույմ է որակական և/կամ քանակական բնույթ՝ ըստ այդմ այն պարունակում է որակական հիմնավոր տեղեկատվություն և/կամ համապատասխան թվեր և փաստեր, որոնք հիմնավորված, չափելի և ստուգելի են:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Վերլուծական աշխատանքն իրականացնողները ունեն համապատասխան որակներ՝ հետազոտական, վերլուծական հմտություններ, մասնագիտական որակավորում, կոչումներ, փորձառություն և այլն:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Նյութի հիման վրա արված է հստակ եզրակացությունը, մշակված են առաջարկություններ:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		
Նշում: նյութը չի հրատարակվում, եթե նշված չափանիշներից որևէ մեկի պատասխանը բացասական է, սակայն այն կարող է ըստ տվյալ չափանիշի շտկվել և կիկին ներկայացվել հրատարակման:				
Ընդհանուր եզրակացություն. նյութը <input type="checkbox"/> կարող է հրատարակվել առանց հետագա փոփոխությունների, <input type="checkbox"/> կարող է հրատարակվել չնչին փոփոխություններով, <input type="checkbox"/> կարող է հրատարակվել էական փոփոխություններից հետո, <input type="checkbox"/> չի կարող հրատարակվել, <input type="checkbox"/> խորհուրդ է տրվում հրատարակել այլ՝ ոչ ԵՄՀ, ֆինանսավորմամբ: Այլ նկատառումներ				
Այլ նշումներ, որոնք կարող են նպաստել տվյալ նյութի հրատարակման մասին որոշման հիմնավորմանը				

Գրախոսող փորձագետ/ների անուն/ազգանուն/ներ, գիտական աստիճան/ներ, կոչում/ներ, պաշտոն/ներ	Մտորագրություն/ներ

ԵՄՀ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՄԲ ՎԵՐՀԱՆՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԵՄՀ հետազոտությամբ վերհանցված տվյալների հրապարակայնացման կարգի նպատակն է ներկայացնել ԵՄՀ հետազոտական տվյալների տարածումը և ամրագրումը:

ԵՄՀ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ

- ԵՄՀ հետազոտությամբ վերհանված տվյալների հրապարակայնացման հիմնական լսարաններն են (չեն սահմանափակվում այսքանով)՝
 - ԵՄՀ կրթական համայնքը,
 - այլ բուհեր, կրթական հաստատություններ,
 - հետազոտության և զարգացման կենտրոններ,
 - հետազոտողներ և հայտնագործողներ,
 - հետազոտական լեզալ խմբեր, կազմակերպություններ, հիմնադրամներ,
 - ուսանողներ,
 - շրջանավարտներ,
 - գործատուներ,
 - պետական մարմիններ և կառավարություն,
 - միջազգային կազմակերպություններ, միջազգային մարմիններ,
 - հանրությունը:
- ԵՄՀ հետազոտության և զարգացման կենտրոնը պատասխանատու է ԵՄՀ հետազոտությամբ վերհանված տվյալների վավերականության ճշտման, հրատարակման ընթացքի, պաշտպանման և զարգացման համար և իրականացնում է այդ տվյալների տարածման գործընթացի պայմանագրային կարգավորում:
- ԵՄՀ հետազոտությամբ վերհանված յուրաքանչյուր տվյալի հրապարակայնացումից առաջ լրացվում է ԵՄՀ հրապարակայնացվող հետազոտական տվյալ/ների տարածումը հաստատող ձևաթուղթ:
- ԵՄՀ հետազոտական աշխատանքի արդյունքի հակիրճ նկարագրությունը տեղադրվում է կայքում, իսկ վերջինիս ամբողջական տարբերակը հասանելի է լինում գրադարանում (ավանդական/էլեկտրոնային տարբերակներով):

ԵՄՀ հրապարակայնացվող հետազոտական տվյալ/ների տարածումը հաստատող ձևաթուղթ

Ձևաթղթի լրացման ամիս/ամսաթիվ

Տվյալ/ների անվանումը

Տվյալ/ների նկարագրություն

Տվյալ/ների հրապարակայնացման գործընթաց/ների նկարագրություն

Տվյալ/ների հրապարակման լսարան/ներ, նշել անվանում/ներ, տալ նկարագրություն

Տվյալ/ների հրապարակայնացման նպատակայնության հիմնավորումը

Տվյալ/ները վերհանված հետազոտող/ների անուն/ազգանուն/ներ, գիտական աստիճան/ներ, կոչում/ներ, պաշտոն/ներ	Մտորագրություն/ներ
	Դեմ չեմ տվյալ/ների հրապարակայնացմանը _____
	Դեմ չեմ տվյալ/ների հրապարակայնացմանը _____
	Դեմ չեմ տվյալ/ների հրապարակայնացմանը _____

ԵՄՇ հետազոտության և զարգացման կենտրոնի ղեկավար	_____
Տվյալ/ների վերհանմանը համագործակից այլ հաստատություն/ների (եթե կան) պայմանագրային հետազոտող/ների անուն/ազգանուն/ներ, գիտական աստիճան/ներ, կոչում/ներ, պաշտոն/ներ	
	Դեմ չեմ տվյալ/ների հրապարակայնացմանը _____
	Դեմ չեմ տվյալ/ների հրապարակայնացմանը _____
Տվյալ/ների վերհանմանը համագործակից այլ հաստատություն/ների (եթե կան) ղեկավար անձի անուն/ազգանուն/ներ, գիտական աստիճան/ներ, կոչում/ներ, պաշտոն/ներ	Դեմ չեմ տվյալ/ների հրապարակայնացմանը _____